

Պ Լ Տ Մ Ի Կ Ը Ն

Հայի անցեալի եւ ներկայի մասին տեսութիւն.

I

Մենք պէտք է խօսենք 1) հայերի եւ թուրքերի յարաբերութեան մասին աշխատելով բացատրել թէ ո՞վքեր են հայերը եւ ո՞վ թուրքերը, թէ դրանցից իւրաքանչիւրը ի՞նչ յաւակնութիւններ ունի մեր երկրի վերաբերութեամբ, 2) թէ իրերի իսկական դրութիւնը մեր երկրում ինչպէս է ըմբռնում եւ ժամանակակից համամարդկային դադափարները սրբան ընդունելի են այս կամ միւս ազգի մէջ, նայելով նրա կուլտուրական զարգացման:

Հայոց պատմութիւնը քիչ է ուսումնասիրուած, թուրքերինը՝ աւելի ևս սակաւ. ուստի եւ հնարաւորութիւն չըկայ զուտ պատմական հետազոտութեամբ լուսաբանել այդ երկու ազգերի պատմութեան մութ կէտերը. և, ինչ որ ասելու ենք, հարեանցի ծանօթութիւն է լինելու:

Այն աշխարհը, որ հին յոյները, հռոմայեցիք, պարսիկները արարացիք ևլին. ևլին. Արմենիա էին կոչում եւ մենք Հայաստան, այն աշխարհը, որ աշխարհագրական դիրքով ներկայացնում է մի բարձրաբերձ լեռների կոյտ, որտեղից ինչպէս զարկերակներ Թիլզըն են առնում եւ կենդանութիւն տալիս բերլիական եղեմին—առաջաւոր Ասիային—Նիւրատ ու Տիգրիս, Ճորոխ եւ Նրասիւ—չորս գետերը, այն աշխարհը, որ արեւելքի եւ արեւմուտքի հանգոյցն է, ուր աշխարհահայեացքները յաջորդել են միմեանց անբող պետութիւնների քաղաքակրթութեան համեմատ, ուր քաղաքակրթութիւնը մէկի կամ միւսի փոխանակել են իրար եւ վերջապէս, ուր մրցել են երկու համաշխարհային—արեւական եւ մոնղոլական—ցեղերի ներկայացուցիչները ի դէմս քրիստոնէութեան ու մահմեդականութեան, որոնցից առաջինի կրօնը հոմանիշ է արեւմուտքի եւ երկրորդինը արեւելքի կուլտուրայի. այն աշխարհը, որ ի ընդ ներկայացուցիչ է եղել արեւելքում արեւական ցեղի քաղաքակրթութեան, — Արմենիան կամ Հայաստանը — այժմ պատմական, աշխարհագրական մի անուն է, եւ տարածութիւնը պարփակում է իւր մէջ լեռների շղթաներ, արագահոս

դետերի հովիտներ և բարձրագիւր լճերի աւազաններ: Արմենիա
կամ Հայաստան անուան տեղ այժմեան տիրապետող ազգերը
այդ երկրի զանազան մասերը իրանց կալուածներն հետ միա-
ցնելով՝ իրանց քաղաքական միտումների համեմատ տուել են
նրանց անուններ՝ Անատոլիա, Ասիկա և Քիււրդիստան:

Հին հայկական բարձրաւանդակի պտակը որսալան Արարատ
սարը այժմ ընկած է երեք կայսրութիւնների մէջ և միայն
հանգոյցն է ներկայացնում Քուրքիայի, Ռուսիայի և Պարսկաս-
տանի սահմաններն: Երկրի ընակիչներն են քրիստոնեայ հայերը,
վրացիք, ասորիները, մահմետական թաթար-թուրքերը, քիւր-
դերը (մահմետական եղիզի), կովկասեան լեռնականները և այլ
մանր ազգերի, որոնք պատկանում են քրիստոնեայ կամ մահ-
մեդական կրօններին: Հայերը այդ երկրի ազգաբնակութեան մի-
ջուկն են ներկայացնում, ուղիղ այնպէս, ինչպէս Փալլասները
Եգիպտոսում: Դրանք ապրում են մեծ մասամբ գիւղերում՝ երկ-
րագործութեամբ, նահապետական նիստ ու կացով, իսկ քաղաք-
ներում՝ արհեստներով ու վաճառականութեամբ: Ընդհանուր
առմամբ հայ դիւղացին և քաղաքացին նուիրուելով ու ստա-
ւելնելով իւր աշխատութեանը, բազիի այժմն ու խելքին՝ դէպի
օտարազգիները զգաստ են և ուրեմն խաղաղ ընակչութիւն են
կազմում:

Հայը խաղաղ քաղաքացի է իւր երկրում, և համեմատա-
կան բարեկեաց դրութեամբ շարժում է իւր հարեան ազգերի
նախանձը: Ու երբեմն առեւտրութեան արտայայտութիւն է ստա-
նում: Այս հանգամանքին պէտք է վերադրել վերջին տարիների
հայ-թուրքական ոչ բարեկամական ընկիւմները: Օսմանեան պե-
տութեան մէջ ըստ էա հայը, չը նայելով պարբերական հալա-
ծանքներին և կոտորածներին դեռ բարդաւաճելու ձգտումներ
է ցոյց տալիս, մինչդեռ երկրի տէրերը-մահմեդական տա-
ճիկները-տիրապետող ազգի յաւակնութեամբ՝ գոյրոյթով են
նայում հայերի յառաջագիւմական և նոր գաղափարներով ոգևո-
րուելու ձգտմանը, և պանիսլամիզմ, ոտեղծողների թելադրու-
թեամբ, կամենում էին ջնջել հայութիւնը մի կողմից՝ մի ոչ
ցանկալի տարր մէջ տեղից ջնջելու և միւս կողմից, մահմետա-
կանների ընակալայրերը ընդարձակելու համար: Մահմետական-
ների պանիսլամիզմը կարող էր յառաջ բերել պանարմենիզմ,
եթէ հայերը թուական առաւելութիւն ունենային և ոգևո-
րուէին երեւակայական գաղափարներով, բայց հայերը գիտեն
իրանց թուական նուազութիւնը և իրեն դործնական ժողովուրդ
քիչ են ոգևորում երեւակայական գաղափարներով: Հայերի
ըստը ջանքն էր և է տեսնել մի կարգաւորուած տէրութիւն, ուր

ապահովուած լինէր նրանց կեանքը, ընտանեկան պատիւը և գոյքը: Օսմանեան պետութեան սահմանադրական կարգեր ընդունելը ճնշում և հարստահարուած հայերի իղձերի լրումն կը լինէր, եթէ սահմանադրական կառավարութեան ժամանակ տեղի չունենային Ադանայի հայկական կոտորածները, որ սհա եօթն ամիս է ամբողջ լուսաւորեալ մարդկութեան քննադատութեան ու խորհրդածութիւնների առարկայ է դարձել:

Տաճկաստանում հայը օրէնքից դուրս էր գտնուում այնպիսի անքաղաքակիրթ ազգերի աչքի առաջ՝ ինչպէս թուրքերն ու քիւրդերն են, որոնք թալանից և կրօնական մոլեռանդութիւնից դատ ուրիշ համամարդկային և քաղաքացիական պարտականութիւն չէին և չեն ճանաչում. թուրքերը հային Օսմանեան պետութեան թշնամի են համարում. և ի դար է թուրքիայի հայը կեանքի, գոյքի ապահովութիւն պահանջելու և մարդկօրէն ապրելու ձգտումն ցոյց տալու համար մարտիրոսւում է իբրեւ համայն իսլամութեան թշնամի: Թուրքիայի մահմետականների թշնամական վերաբերմունքի արտայայտութիւն կարելի է համարել Կովկասի մահմետականների բռնկումները հայերի դէմ, որ տեղի ունեցան 1905—7 թուերին, Բագու, Նրեան և Նախիջևան քաղաքներում ու գաւառներում, Ելիսաւէտպօլի նահանգի Շուշի և Դանձակ քաղաքներում, Թիֆլիս քաղաքում և Բորչալու գաւառում: Նոյն այդ 4 նահանգում 1905 թ.-ին մի քանի անգամ կրկնուեցին ընդհարումները:

Ի հարկէ Կովկասում տեղի ունեցած թշնամական բռնկումները հայ և թաթար տարրերի մէջ նման չէին թիւրքիայում տեղի ունեցածներին. Կովկասում երկու հաւասարազօր ուժեր կանգնած էին իրար հանդէպ. փորձում էին իրանց ուժերը, և այժմ, իրանց իսկական ուժի գիտակցութեամբ իրար հետ լազազ ապրում են: Թուրքիայում մահմետականները բացառիկ դիրք ունէին. նրանք այնտեղ թէ տիրող ազգ են և թէ թուական առաւելութիւն ունեն: Հայերը դատապարտուած էին խմբերով կոտորուելու, կոտորածից ազատուելու համար կամ կրօնափոխ լինելու կամ գաղթելու: Այս պարբերական հալածանքը անշուշտ չէր կարող առաջ չը բերել բողոք հարստահարուածների կողմից: Բողոքները սկզբում յայտնուեցին օրինականութեան սահմանում. յետոյ արդէն յեղափոխական կերպարանք ստացան: Սահմանադրութեան առաջի տարեգարձը դեռ չէր տօնուել, երբ հայ յեղափոխ սկսունքը սկսեցին թուրքերի հետ միանալու ջանքեր անել և այս ամենալաւ ապացոյցն է, որ հայերի ձգտումն եղել է միայն և միայն կեանքի, գոյքի և ընտանեկան

պատուի ապահովութիւնը, և խաղաղ դործունէութիւն երկրի քարգաւաճման գործում:

Ի դէպ. մի համառօտ տեսութիւն հայերի և նրանց հաւան թաթարների ծագման մասին աւելորդ չենք համարում: Ամենահին ժամանակից արեւելեան մի ցեղ, ըստ ոմանց իրանահան ճիւղից արեւելքից կամ հարաւարեւելքից (Խորեն.) դալիս է Հայաստան և ընկններին (անյայտ ծագմամբ) տիրելով կազմում է հայ ազգը. իսկ ըստ ոմանց, որ աւելի հաւանական է, եւրոպական կամ հնդկագերմանական ցեղից՝ յատկապէս Փոքր-Ասիայի ծայրում ապրող հին Բիւզանդիոնից ոչ հեռու, փռիւզիական աղբից մի ճիւղ՝ Քր. ա. 800 տ. դալիս է Հայաստան, տիրապետում է ընկններին (որոնց ծագումը նոյնպէս անյայտ էր) տալիս է նրանց իւր ազգային հակումները և քաղաքակրթութիւնը, նախ ստրկացնելով և ապա կուլ տալով նրանց:

Առաջին աւանդութեամբ եկոր առաջնորդի անունը Հայկ էր. նրա անունով էլ երկիրը Հայաստան կոչուեց, ազգը՝ հայ: Երկրորդ աւանդութեամբ եկոր առաջնորդի անունը Արմենակ էր. երկիրը Արմենիա կոչուեց, իսկ ազգը Արմէն: Առաջին աւանդութեամբ մեր ազգը սկզբնաւորուել է Ք. ա. 3-4000 տ. իսկ ը. աւանդութեամբ 800 տ.: Առաջին աւանդութիւնը ազգային է, երկրորդը օտար: Ա. և Բ. աւանդութիւններից այս կարող ենք եզրակացնել, որ արեւմտեան ճիւղի տիրապետողները գտել են ընկններին, որոնք ունեցել են աւանդութիւն Հայկի մասին, երկիրը և ազգը նրա անունն հետ կապելով, իրանք էլ հայ են կոչուել և երկիրը Հայաստան:

Արդ, ըստ մեզ՝ Հայ, և ըստ օտարաց՝ Արմէն ազգը սկզբում պահել է ինքնուրոյնութիւն իւր թագաւորների իշխանութեան տակ, ապա ընկել է հետզհետէ ասորեստանցիների, մեդացոց, պարսից, սիւրիացոց գերիշխանութեան տակ: 328 թ. Ք. ա. նուաճուեց Ալէքսանդր Մեծից, և շատ ազգերի հետ հայն էլ հաղորդակից եղաւ յունական կուլտուրային—ընկաւ նրանց կրօնի, գեղարուեստի, դրահանութեան ազդեցութեան տակ: Հայկական միջոլորդիան, իւր աստուածների հայր Արամազդով, նրա Վահագն ու Տիւր որդիներով և Անահիտ ու Աստղիկ դուստրներով, յիշեցնում է Ձևոյի բնասները: Ալէքսանդրից յետոյ Հայաստանը մտնում է Սելևկիացոց թագաւորութեան մէջ, բայց կառավարում է առանձին սատրապներով կամ փոխարքաններով: Դրանցից երկուորը 190 թ. Ք. ա. Արտաշէսն ու Զարիադը հրատարակեցին իրանց անկախ և

օգտուելով Սելեկիացոյ պետական քայքայումից, հաղմոկելու պեցին Մեծ և Փոքր-Հայաստան: Ուղիղ այդ ժամանակ անկախութիւն ձեռք բերին հրէաներն էլ Մակաբայեցոց Յուդա, Յովնաթան և Շմաւոն եղբայրների արեան գնով, սրոնք դիւցազնաբար ընկան հայրենիքի ազատութեան կռուի դաշտում: Հրէաների ազատութեան ձգտելու գաղափարը հայրենասիրութիւնը չէր, այլ խղճի ազատութիւնը և հայրենական կրօնը անաղարտ ու սուրբ պահելու ցանկութիւնը:

Նոյնը չէ կարելի ասել հայերի վերաբերութեամբ: Հայերը հրէաների նման ցեղային նուիրագործուած, սեպհական կրօն չունէին: Նրանք իւրացրել էին ասորեստանցիների ու յոյների աստուածների և նրանց կուռքերի պաշտամունքը և պարսիկների Միհրն, Որմիշդն ու Արհմը, անունների փոփոխութեամբ: Արտաշիսացի յետոյ նրա մօտաւոր յաջորդներից՝ Տիգրան Մեծը, միացրեց երկու Հայաստանները Ք. ա. 70 թ. այլ և նուաճեց Կովկասը, Միջագետքը, Կապադովկիան իբրև անկախ տաշխարհակալ: Բռնի ուժով խաղաղացրեց Արարիայի և Միջագետքի անհանգիստ տարրերը և Միջագետքի սահմաններում, Նինուէի և Բաբելոնի աւերակներից ոչ հեռու, հիմն դրեց նոր տեսակ հայկական Բաբելոնի—Տիգրանակերտի—որի բնակիչների թիւը միլլիոնի էր հասած և իւր արքունիքը Արտաշատից տեղափոխեց այդ նոր մայրաքաղաքը: Հայերը անկախ անկախ պետոյների ձեռքի տակ, լինելով նոր, թարմ ազգ, ազատ հնացած տրագիկաններից՝ դիւրութեամբ ըմբռնեցին իւր ժամանակին ասորեստանցոց զինւորութիւնն ու բեւեռադրութիւնը, մեղացոց զինաշարժութիւնն ու ազատ ոգին, յունաց կուլտուրան: Ամենակարճ միջոցում ձեռք բերին ըզրոր ազգերի համակրութիւնն ու պատկառանքը: Հայերի շնորհիւ ծաղկեց Միջագետքի վաճառականութիւնը. և այն՝ ինչ որ չաւարանց Ալէքսանդրը, յոյս ունէր գլուխ բերել Տիգրանը, այն է միացնել Արեւելքը Արեւմուտքի հետ ստեղծելով արեւելա-արեւմտեան միջին քաղաքակրթութիւն և մօտեցնել ծաղկերը. բայց Հայոց դժբաղդութիւնը այն եղաւ, որ դորժ ունեցան ամենակուլ Հռոմի հետ և, «բաժանեալ զի անբեցեալ» քաղաքակա-նութեան զոհը դարձան: Տիգրանի յաջորդները թողին աշխարհակալութիւնը և բաւականացան միայն «Հռոմի դաշնակցի» համեստ անաղորդ կրելով: Դարձեալ երկու տարանջատ բանակներ—արեւելքը և արեւմուտքը—ի դէմս պարթեաւ-Պարսից և Հռոմայեցւոց, իբրեւ երկու անհաշտ թշնամիներ, բաղխեցին միմեանց և Հռոմը Տիգրանի ձեռքից յաղթութեան դափնին խլելով, մի լաւ բան միայն արեց, այն, որ Հայաստանի ներքին անկա-

խուժեանք չը դիպաւ, և Հայաստանը որպէս մի բնական ամբարտաի, պատնէշ, պահեց արեւելեան բարբարոսների դէմ: Հին Հռովմը գիտէր իւր աշխարհակալական ձգտումներին բաւականութիւն տալ նուաճելով ազգերին. բայց և այդ նուաճութիւն շնորհելով: Այս մասին Հռովմի օրինակին հետեւում է Անգլիան: Բայց Հռովմի յաջորդ Բիւզանդիան Հռովմի երկու պատգամներից միայն առաջինը «բաժանեա՛ զի տիրեցեոսն» գործադրեց և մոռացաւ մասնաւորապէս Հայաստանի վերաբերութեամբ Հռովմի աւանդութիւնը—պահել Հայաստանի ներքին անկախութիւնը, և ունենալ նրան որպէս դաշնակից և պատնէշ արեւելեան հեղեղների դէմ... Նախ Բիւզանդիան մոռացաւ այդ և յետոյ ինչպէս կը տեսնենք, կարծատեղութեամբ քանդեց այդ բնական պատնէշը և պատճառ դարձաւ արդէն սաեղծութեամբ Եւրոպական կուլտուրայի անկման. ընդարձակ առպարէղ բաց արեց իւր դէմ արշաւող մահմետական արաբների և ապա մոնղոլական բարբարոս թարմ ոյժերի առաջ: Բիւզանդիան կրօնական նեղսրտութեամբ տանել չը կարողացաւ Հայաստանի ներքին անկախութիւնը: Գիւսական հրճուանքով ընդունեց արաբներից թուլացած, իւր ձեռքով ուժասպառ եղած Հայաստանի—մոնղոլների ձեռքով աւերածութեան առաջին լուրը, բայց երբ կամեցաւ արեւելեան շահատակութիւններին վերջ տալ, արդէն ուշ էր, Հայաստանն էլ ընկաւ, ինքն էլ:

Գ. դարի վերջերում Ք. յ. Տրդատ Մեծի ժամանակ քրիստոնէութիւնը դարձաւ Հայաստանի պետական կրօն: Հայերը կրօնով էլ կապուեցին արեւմուտքի հետ: Քրիստոնէութեան ազդեցութեամբ հայերի հին գրականութիւնն ու կուլտուրան մոռացուեցին, բայց ոչնչացման շենթարկուեցին: Ե. դարու առաջին քառորդում սաեղծութեց կամ աւելի շուտ վերականգնուեց Հայոց արդէն նոր-քրիստոնէական գրականութիւնը: Ազգային աւանդութիւններն էլ քրիստոնէական ձևակերպութեամբ սկսեցին շարունակել իւրեանց գոյութիւնը: Գրականութիւնը վերականգնուեց և ոչ թէ՛ նոր ստեղծուեց, քանի որ Ե. դարի, որ ոսկեդար ևս է կոչուում, վերածնունդ գրականութիւնը իւր բարձրութեամբ, յանկարծ մեծ ուժով և մշակութեամբ երևան եկաւ Վառամշապուհի խաղաղասէր կառավարութեան ժամանակ, Վահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի ձեռքով... Ինչէր, ինչէր չէին կարող անել Հայերը, եթէ նրանց արքաները լինէին Վառամշապուհ, ըմբռնէին իրանց երկրի քաղաքական փափուկ գրութիւնը ներքին և մասնաւորապէս արտաքին թշնամիների նկատմամբ...: Թարգմանիչների և նրանց աշակերտների

ձեռքով մշակուեց հայկական գրականութիւնը, որի մէջ աչքի են ընկնում առտուածաբանական, փիլիսոփայական և պատմական ճիւղերը: Ա. Գիրք թարգմանողները թարգմանեցին Արիստոտէլի և այլոց գրուածներն էլ, «եղծ աղանդոց» ճեղքնակ Եղնիկը, և Հայոց պատմութիւն կազմող ու նրա աւանդութիւնները հաւաքող Մ. Խորենացին ամբողջ սերունդներ դաստիարակելով և ոգևորելով՝ այժմ էլ բանասէրների ուշադրութիւնից չեն լքուած: Հապա Հայոց դիւցազուններին ներբողող մեր Իլիականի և Ոգիտականի-Վարդանանց և Վահանանց — քաջագործութիւններին վիպագրող Եղիշէն ու Ղ. Փարպեցին, որոնք այնքան քաղցր բարբառով նկարագրում են Նոր Մակաբեաններին-Վարդանի և Վահանի-Նոր Խորայէլի կրօնի պաշտպանների գործերն ու մահը:

428 Թուին, Մեծ Հայաստանը գրկուեց երկար և բեզմնաւոր կերպով թագաւորող տանից: Նրա վերջին շառաւիղին գահընկէց անելով Պարսիկները մեր երկրի մեծագոյն, իսկ յոյները փոքր մասին տիրեցին և կառավարում էին առաջինները՝ մարդպաններին, իսկ երկրորդները՝ կիւրապաղատների ձեռքով: Այս հանգամանքով Հայոց աղգային աղատութեան ոգին չը ընկճուեց: Տէնց այդ նուաճման հետեւեցին կրօնական պատերազմները, որոնք վերջացան հայերի բարոյական յաղթութեամբ: Վահան Մամիկոնեանի ձեռքով հայերը ստացան Պարսից թագաւորից կեանքի, գոյքի և խղճի անձեռնմխելիութեան երաշխաւորութիւն և Հայաստանը դարձաւ ազնուապետական աւատական բազմապետական-օլիգարխիա, մի ստորագրեալ պետութիւն, որ ունենալով իւր գերիշխող պարսիկների կողմից մարդպան և յոյների կողմից կիւրապաղատ, ունէր և զինւորական ընդհանուր սպարապետ, և հանգամանքի պահանջման համեմատ կարող էր ընդհանուր ուժով զօրեղ զինադրութիւն ցոյց տալ իւր ներքին ինքնավարութեան դէմ ոտնձգութիւն անողին, պաշտպանելով իւր ներքին աղատութիւնն ու ինքնուրոյնութիւնը: Է. դարից արդէն Պարսկաստանին Հայաստանի նուաճման վերաբերութեամբ, յաջորդում է մահմետական Աբարիան և մաքաւման մէջ է մտնում յոյների հետ: Արաբական շրջանում Հայաստանը դառնում է իսկապէս մի քանի պետութիւնների գաշնակցութիւն: Այդ պետութիւններն էին Նախկին Արշակունի հարստութեան պալատական պաշտօնեաները, որոնք որոշ երկրամասերի տէրերն էին և կոչուում էին Նախարարներ: Այս նախարարներից հզօրագոյնները արաբական խալիֆայից թագ ստացան: Եւ Խալիֆի ու նրա ներկայացուցիչ ոտակիանի գերիշխանութեան տակ, միմեանցից անկախ, կառավարում էին իրանց երկրները: Այսպէս գոյացաւ Բաղրատունեաց, (սա էլ

յեայտ ըստանուեց Անւայ, Կարսի, Լօռու) Սիւնեաց, Արծրունեաց ևլն. Թագաւորութիւնները: Արաբական շրջանը խոր աղղեցութիւն թողեց մեր երկրում: Ուրիշ ամեն շրջաններից աւելի՝ հայկական ճարտարապետութեան կնիքը հայկական բարձրաւանդակի վերայ երևաց արաբական շրջանում: Գուցէ այն պատճառով որ ազատ շրջաններից յետոյ ամենից մօտը դա է մեզ համար. իսկ ամենահիւսէ ժամանակից և բարբարոսների ձեռքից անյայտացել են Արշակունեաց հզօր թագաւորութեան, և նրան յաջորդող անիշխանութեան յիշատակաբանները. բայց մինչև այժմ կանգուն են Բագրատունեաց մայրաքաղաքների (Անի, Կարս ևլն.) մնացորդները—այդ շրջանում շինուած տաճարները: Բագրատունեաց անկմամբ վերջանում է Հայոց պատմութեան առաջին կամ ներքին աղատութեան շրջանը և սկսում երկրորդ կամ ստրկութեան շրջան:

(Շարունակ.)

Վրբ ԲԻՆՅ Մարգարեան.



ԱՇՆԱՆԸ

(Գիրքայման)

Երբ նա վերջին անգամ քաղաքից դուրս դաշտումն էր արտերն արդէն հասունացել էին: Արևի ոսկեգոյն ճառագայթներով լցուած հասկերի անփոյթ ալեկոծւող ուլիկանը մի ինչ որ անհասկանալի երկիւղ գցեց նրա հիւանդ սիրտը... Եւ երբ նա իր հայեացքը ուղղեց դետնին, տեսաւ որ իր շուրջը կանաչ ու դեղին հասկերի միջից փոքրիկ կապտագոյն ծաղիկները քնքոյշ և աղերսալի իրան են նայում «Վերցրու մեզ, հիւանդ մանուկ», ասում էին նրանք:

Մեծ դժուարութեամբ նա քաղեց նրանցից մի փունջ և յոգնած ու ուրբ—մուրբ քայլերով դարձաւ տուն:...

*
* * *

Վերջերս արդէն նա սկսել էր վախենալ իր սեպհական անկողնից, որի մէջ պառկած սարսափելի տխուր օրեր և անքուն գիշերներ էր անցկացնում: Երբեմն նա ընդունովին հագնուած կռթնում էր իր մահճին և անհամբեր սպասում այն